«Յուքոմ» ՓԲԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
ԱՄԵՆԱԱՐԱԳ ԲԱՐՁԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

0170900

# Համաձայնագիր

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 026/01/01/2013 Պայմանագրի Հավելված 1-ում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան

«18» մարտ 2021թ.

«Յուքոմ» ՓԲ Ընկերությունը, ի դեմս ընկերության Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Դավիթ Միրաքյանի, ով գործում է 03.12.2020թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ Ընկերությունը, ի դեմս տնօրեն գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 01.01.2013թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 026/01/01/2013 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1. Պայմանագրի 1-ին կետում ավելացնել հետևյալ ենթակետը. «Աշխարհագրական սկզբունքով տրամադրվող ֆիքսված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը: Սույն կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները՝ Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում»:

1.2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.

1.Տրամադրվող ծառայություն(ներ)՝

| N | Նկարագրություն | Ամսավճար ՀՀ դրամ | Հասցեներ |
|---|---|---|---|
| 1 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 2 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 3 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 4 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 5 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 6 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 7 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 8 | U!Net CIR Extra<br>150 մբթ/վ<br>IP քանակ 5 | 570,000 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 9 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 10 | U!Net CIR Extra<br>150 մբթ/վ<br>IP քանակ 5 | 570,000 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26,<br>բն. back up |
| 11 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 12 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 13 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 14 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 15 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 16 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 18 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |
| 19 | U!TV Select Corporate | 2,500 | ք.Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 26 |

Պայմանագրի Հավելված 1-ի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 1182500 (մեկ միլիոն հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ»:

Պայմանագրի 6.8 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից ուղարկված սպամի, իրականացված հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա արդյունքում Բաժանորդին պատճառված վնասների համար: Բաժանորդը պարտավոր է անձամբ պաշտպանել իր վերջնակետային սարքավորումը և համակարգերը վիրուսներից ու այլ անձանց անօրինական միջամտությունից և պատասխանատվություն է կրում նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով Օպերատորին և/կամ այլ անձանց պատճառված վնասի համար, ինչպես նաև կրում է նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով առաջացած պարտքերի մարման պարտավորությունը»:

2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և կնքման պահից:
5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5.1 Կողմերն ընդունում են, որ սույն համաձայնագիրը կարող է կնքվել համաձայնագրի ստորագրված տարբերակները Կողմերի կողմից էլեկտրոնային հասցեներով փոխանակելու միջոցով: Նման եղանակով փոխանակված էլեկտրոնային փաստաթղթերն ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված և/կամ կնիքով վավերացված փաստաթղթերը: Նշված էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են բնօրինակներ և կարող են օգտագործվել որպես ապացույց դատարանում և վեճերի քննարկման մինչդատական վարույթում

5.2 Համաձայնագրին կից հավելվածները հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:

| Օպերատոր | Բաժանորդ |
| --- | --- |
| Յուքոմ ՓԲԸ | «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ |
| Իր. հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9 | Իր. հասցե՝ ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 |
| Գործ. հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9 | Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 |
| Հեռ.՝ 374 11 444444 | Հեռ.՝ 010650015 |
| Ֆաքս՝ 374 60 444441 | ՀՎՀՀ 01540062 |
| ՀՎՀՀ 00024873 | |
| Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ | Բանկ՝ ՝«Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1570043102134100 | Հ/Հ 2470102796740000 |
| Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ | Գործադիր տնօրեն՝ |
| _______________ Դավիթ Միրաքյան | _______________ Հովհաննես Մովսիսյան |